ՀԱՈՒՔԱՐ ՏԱՀԻՐ ԹԱՈՒՖԻԿ. Քրդերը և հայկական հարցը 1877–1920 թթ., *Բեյրութ, 2014:*
هوكر طاهر توفيق، الكرد والمسألة الأرمنية 1877-1920، بيروت 2014

Իրաքցի քուրդ պատմաբան Հաուքար Տահիրի «Քրդերը և հայկական հարցը 1877–1920 թթ.» գիրքը լի է սխալ կռահումներով ու եզրահանգումներով, դեպքերին անտեղյակության ցցուն օրինակներով, ցանկալին իրականի անվան տակ ներկայացնելու մղումով, պատմական իրադարձությունների ու պատմական ժամանակի խութերը և ծալքերը թափանցելու ու խորամուխ լինելու անկարողությամբ կամ էլ նպատակադիր անտեսմամբ, վերջիվերջո, պատմական խեղաթյուրումներով:

Մերկապարանոց հայտարարությունների տպավորություն չթողնելու համար՝ ներկայացնենք, թե որն է Հաուքար Տահիրի հիմնական ասելիքը.

1. Արևմտյան Հայաստան չկա, այն Հյուսիսային Քրդստանն է,

2 քրդերն ավելի հին ժամանակներից են բնակվում «Հյուսիսային Քրդստանում»,

3 հայերի կոտորածների ու կողոպուտի, համիդյան ջարդերի մեջ քրդերը դերակատարություն չեն ունեցել, իսկ հայ-քրդական հարաբերությունների վատթարացման պատճառը հայերն էին,

4 Ցեղասպանության ժխտում. հայերն են քրդերին կոտորել[1]:

1 Հեղինակը փորձում է ապացուցել, որ ներկայիս Թուրքիայի Հանրապետության տարածքում գտնվող Հին Հայաստանի զգալի մասը (Արևմտյան Հայաստան) իրականում Հյուսիսային Քրդստանն է: Ավելորդ համարելով ներկայացնել, թե ինչպես է այդ երկրամասն անվանվել, դիցուք, հունահռոմեական և հետագա ժամանակաշրջանի աղբյուրներում, հեղինակը տրվել է աճպարարությանը: Իր տեսակետները հիմնավորելու նպատակով որոշել է այդ հարցը քննել սկսած XVI դարից, ուստի և հղել է առաջին քուրդ պատմիչ Շարաֆ-Խան Բիթլիսցուն (XVI դ.), որն առաջիններից մեկն է կիրառել Քրդստան անունը: Սակայն պատմական աղբյուրներում այնքան հստակ է այդ երկրանվան Հայաստան անունը, որ անգայթ մնալուն երբեմն չեն օգնի լարախաղացի զգուշավորությունն ու ճկունությունը: Սայթաքել է նաև քուրդ հեղինակը:

---

[1] *Արաբերենից թարգմանությունները կատարել է Նարինե Երանոսյանը:*

Շարաֆ-Խանը, ներկայացնելով Քրդստան երկրի-վիլայեթի սահմանները, հիշում է նաև Հայաստան անունը [Հաուքար Տահիրի ձեռքի տակ եղած տարբերակում՝ Մեծ Հայք ու Փոքր Հայք (Հայաստան) անվանումները. տե՛ս էջ 33–34]: - Բերենք այդ հատվածը. «Քրդստանի վիլայեթը (երկիրը) սկսվում է Հորմուզից, որը Հնդկական օվկիանոսի ափին է: Այնտեղից սահմանն, ուղիղ գծով ձգվելով, հասնում է Մալաթիայի և Մարաշի վիլայեթներին, որտեղ և ավարտվում է: Հյուսիսից այդ գիծն անցնում է Ֆարսի, Պարսկական Իրաքի, Ատրպատականի և Հայաստանի միջով, իսկ հարավից՝ Դիարբեքիրով, Մոսուլով և Արաբական Իրաքով»[2]:

Հաղթահարելու համար այդ խոչընդոտը՝ Հաուքար Տահիրը գալիս է այն եզրակացության, որ պատմիչի հիշատակած երկու Հայքերը նշվել են միմիայն որպես աշխարհագրական անվանումներ և դրանք չունեն քաղաքական կամ ազգային որևէ նշանակություն[3]:

Լավ, իսկ ինչո՞ւ է Հայաստան աշխարհագրական անվանումը պահպանվում. գուցե այն պատճառով, որ այնտեղ դարեր շարունակ հայեր են բնակվել, գուցե փորձել պատասխանել այդ հարցին, գուցե խորհել այդ մասին:

Հեղինակը որպես իր խոսքերի ապացույց վկայակոչում է նաև XVII դարի օսմանյան պատմիչ Էվլիյա Չելեբիին, որը գործածել է Քրդստան բառը: Նա փորձում է ցույց տալ, որ դա պայմանավորված է այդ բնակավայրերի քրդաբնակ լինելու հետ: Իսկապես, արդեն XVII դ. Էվլիյա Չելեբին Քրդստան բառն այնքան առատորեն է կիրառում, որ ժամանակի նշանավոր քրդագետներից Մարտին վան Բրոյնեսենը ենթադրում է, որ նա Քրդստան է անվանել նույնիսկ այն բնակավայրերը, որտեղ քրդերը կազմել են բնակչության աննշան մասը միայն[4]:

Բացի այդ, XVI դ. օսմանյան պետական փաստաթղթերում ու պատմագիրների երկերում Հայաստանի հարավային նահանգների համար սկսում է կիրառվել Քրդստան եզրը: Այս թեմային նվիրված հոդվածում թուրք հետազոտող Բաքի Թեզջանը իրավացիորեն գրում է, որ այդ եզրը օսմանյան տիրապետության շրջանում անկաշկանդ կիրառվել է[5]: Հեղինակը դիպուկ նկատում է, որ ներկա-

---

[2] Ш а р а ф - Х а н И б н Ш а м с а д д и н Б и д л и с и. Шараф-Наме *(այսուհետև՝* Ш а р а ф - Х а н *),* том I, перевод, предисловие, примечания и приложения Е. И. Васильевой. М., 1967, с. 82–83.

[3] *Նույն տեղում, էջ 34:*

[4] M. v a n B r u i n e s s e n. Onyedinci yüzyılda Kürtler ve dilleri: Kürt lehçeleri üzerine Evliya çelebinin notları. Studia Kurdica, 1985 nisan, № 1–3, s. 18.

[5] *Բաքի Թեզջանի հոդվածն առաջին անգամ լույս է տեսել անգլերեն լեզվով. տե՛ս* “The development of the use of `KurdistanԲ as a geographical description and the incorporation of this region into the Ottoman Empire in the XVIth century”.– The Great Ottoman-Turkish Civilisation, 4 vol., Ankara, 2000, vol. 3, pp. 540–53: *Մենք օգտվել են հոդվածի ֆրանսերեն*

յիս Թուրքիայի հարավարևելյան շրջանների (ներառում է Արևմտյան Հայաստանը) համար XVI դ. Քրդստան բառի կիրառումն առավելաբար պայմանավորված էր Օսմանյան կայսրության քաղաքական կառուցվածքով ու վարչաքաղաքական բաժանմամբ, քան էթնոժողովրդագրական խճանկարով[6]: Թուրք հետազոտողի դիտարկմամբ՝ եթե նույնիսկ ենթադրենք, որ XVI դ. օսմանյան աղբյուրներում Քրդստան կոչվող տարածքում ապրող բոլոր մահմեդականները քրդեր լինեին, միևնույն է, հայերը թվապես գերազանցելու էին նրանց[7]:

Այն փաստը, որ հայերը թվապես գերազանցում են քրդերին հենց Շարաֆ-Խանի դարաշրջանում, որևէ կասկած չի հարուցում: Շարաֆ-Խանը հայտնում է, որ իր իշխանանիստ Բիթլիս քաղաքում հայերը մեծամասնություն էին կազմում[8]: Վանում էլ հայերի թվական բացարձակ գերակշռության մասին են վկայում նաև եվրոպացի ճանապարհորդները[9]: Քննություն չի բռնում Տահիրի այն եզրահանգումը, թե XVI դարում Հայաստան անվան կիրառումը չի ունեցել ազգային նշանակություն, այսինքն՝ կապված չէր էթնիկ պատկերի հետ (էջ 34): Մեր կարծիքով՝ նրա վարկածը սխալ է և նշյալ ժամանակաշրջանում Հայաստանը Հայաստան էր թե՛ աշխարհագրորեն, թե՛ ժողովրդագրորեն:

Հ. Տահիրն այնքան հաճախակի է պատեհ ու անպատեհ առիթով կիրառում Հյուսիսային Քրդստան նորահայտ տերմինը, որ տպավորություն է ստեղծվում, թե փորձում է ինչ-որ բան պարտադրել: Նա նույնիսկ խեթ հայացքով է նայում եվրոպացի հեղինակներին, որոնք իրենց աշխատություններում կիրառում և նախապատվություն են տալիս Արևմտյան Հայաստան բառին (էջ 30):

Քուրդ հետազոտողները, երկու ժողովուրդների երկխոսության ու բարեկամության կարևորությունը հաշվի առնելով, որպես բացարձակ սկզբունք պիտի ընդունեն ամենագլխավորը՝ պատմական ճշմարտությունը, և պետք է մեկընդմիշտ հասկանան՝ պատմության անիվն անշրջելի է. այդ երկրամասի անունը Հայաստան է: Այո, Թուրքիայի Հանրապետության կազմում ընդգրկված այդ նահանգները հիմա մեծիմասամբ քրդաբնակ են, էթնիկապես քրդական, բայց դա նրա աշխարհագրական անունը չէ ու չի եղել, իսկ այդ տարածքների համար Քրդստան անվան կիրառումը վերջին ժամանակների հայտնություն է:

թարգմանությունից. տե՛ս B. Tezcan. Le dnveloppement de l'usage du terme "Kurdistan" comme description gnographique et l'intngration de cette rngion dans l'Empire ottoman au XVIe siΠcle, Etudes Kurdes, №10, Paris, 2009, p. 96*):*

[6] *Տե՛ս նույն տեղում, էջ 96–97:*

[7] *Տե՛ս նույն տեղում, էջ 99:*

[8] *Տե՛ս* Шараф-Хан, с. 387.

[9] *Հ. Հակոբյան. Ուղեգրություններ, հ. Ա, ԺԳ–ԺԶ դար (1253–1582), Երևան, 1932, էջ 302:*

2 Քրդերի բնիկություն, իսկ հայերին՝ եկվորություն վերագրելու Հ. Տահիրի մտադրությունն անսքող է, թեպետ այդ մասին նա ուղիղ չի հայտարարում:

Շեշտելով հայերենի ու քրդերենի կրողների հնդեվրոպական ժողովուրդներ լինելու հանգամանքը՝ հեղինակը նշում է, որ երկուսն էլ Միջին Ասիայից են եկել Փոքր Ասիա: Քրդերը հանգրվանել են Քրդստանում, իսկ հայերը գնացել են Բալկաններ, ապա՝ վերադարձել Արմենիա (էջ 31): Հնդեվրոպական նախահայրենիքի տեղադրման և այնտեղից հայախոս ցեղերի գալու հաուքարտահիրյան միջինասիական տեսությունը մեզ համար նորություն է: Այդուհանդերձ, կարելի է կռահել նրա տրամաբանությունը, որը փոքր-ինչ պարզունակ է. քրդերը մնացել են լեռնաշխարհում, այսինքն՝ տեղաբնիկներ են, իսկ հայերը՝ ոչ, գնացել են Բալկաններ և հետագայում վերադարձել տարածաշրջան:

Երբեմն տպավորություն է ստեղծվում, որ եթե Հ. Տահիրը Քրդստան բառի փոխարեն օգտագործեր Հայաստանը, նրա ասածների մի զգալի մասը կհամապատասխաներ պատմական իրականությանը: Այսպիսով՝ նրա կարծիքով, Հայաստանը բնական սահմաններ չունի, իսկ Քրդստանը՝ հակառակը «քրդերը մշտապես մնում էին իրենց հայրենիքում» (էջ 32–33):

Կարծում ենք՝ գրքի հեղինակը սխալ է գործում ուշադրություն չդարձնելով քրդական ցեղերի տեղաշարժերին: Ըստ նրա՝ քրդերը մշտապես մնում էին իրենց հայրենիքում՝ շնորհիվ պետությունների՝ էմիրությունների գոյության (էջ 32): Դրանով աստանդական կյանք վարող քրդական ցեղերի իրական պատմությունը վեր հանելը դառնում է անհնարին գործ: Այսպիսով, հասկանալու փոխարեն, թե քրդական ցեղերն իրենց բնակության ներկայիս վայրերում երբ և որտեղից են հայտնվել, մասնավորապես, երբ են թափանցել Հայկական լեռնաշխարհ, նա քրդերին վերագրում է այդ վայրերում անհիշելի ժամանակներից բնակության իրողություն՝ դրանով իսկ փակուղի մտցնելով հարցի անաչառ քննարկումը: Նա պարզապես քրդերին վերագրում է հազարամյակների պատմական ներկայություն Քրդստանի չորս մասերում ու դրանով բավարարվում:

Ավելին, նպատակադիր ձևով քուրդ հեղինակը ցանկանում է իր ընթերցողին համոզել, որ հայերն ավելի ուշ են հաստատվել, ինչպես ինքն է ասում, Հյուսիսային Քրդստանում: Այսպես, նա գրում է, թե XIX դարում հայերը Փոքր Ասիայի խորքերից եկել են Հյուսիսային Քրդստան (էջ 112), մեկ այլ դեպքում՝ հայերի մեծ մասը տարածվել ու բնակվում էին քրդական էմիրություններում կամ նրանց կողքին (էջ 30):

Խոսելով Օսմանյան կայսրության ցեղասպանական քաղաքականության մասին՝ Հ. Տահիրը գրում է, թե Օսմանյան կառավարությունը որոշել էր «վերականգնել Հյուսիսային Քրդստանի ազգային քարտեզը» (էջ 590): Այսինքն՝ հայերի ոչնչացում կստեղծվեր այն նախաստեղծ, նախասկզբնական վիճակը, երբ

այդ լեռնաշխարհում միայն քրդեր էին ապրում, իսկ հայերը դեռ բնակություն չէին հաստատել:

Իրականում քրդերը Հայկական լեռնաշխարհում չեն բնակվել հնագույն ժամանակներից: Հայաստանում նրանց գոյության մասին լռում են ինչպես հայկական, այնպես էլ հունական, ասորական, բյուզանդական սկզբնաղբյուրները: Արաբական արշավանքների, նվաճումների ու բնակչության տեղաշարժերի հետևանքով արդեն IX–X դդ. քրդական որոշ ցեղեր ներփաթանցել են Հայկական լեռնաշխարհի ծայրագավառներ: Սելջուկյան արշավանքները, բնակչության նոր տեղաշարժերը և հատկապես Բագրատունյաց ու Արծրունյաց թագավորությունների անկումը պատճառ են դառնում, որ Իրանում և Միջագետքում բնակվող քրդերը ներթափանցեն Հայաստան, թեպետ նրանց ներկայությունը, դատելով աղբյուրների տեղեկություններից, աննշան է եղել: Հետագա դարերում շարունակվում են քրդերի ներթափանցումները, նրանք արդեն XIV դարում որոշ վայրերում ստեղծում են իշխանություններ: Որքան էլ քրդերը չընդունեն, Հայաստանում Օսմանյան կայսրության տիրապետության հաստատումը դրական նշանակություն ունեցավ քրդերի համար, քանզի եթե թուրքմենական դարա-դոյունլու և աղ-դոյունլու ցեղերը քրդերին զրկում էին իշխանությունից ու վտարում, ապա ճիշտ հակառակն արեցին օսմանցիները՝ հնարավորություն տալով քրդական ցեղերի ցանցը սփռվել ողջ Հայաստանով:

3. Հ. Տահիրը հնարավոր բոլոր միջոցներով փորձում է հերքել կամ էլ արդարացնել հայերի նկատմամբ քրդական որոշ ցեղերի կողոպուտն ու հանցագործությունները, ինչպես նաև հայ-քրդական կնճռոտ հարցերի ու առճակատման մեղքը բարդել հայերի վրա: Նրա հիմնական նպատակն է ցույց տալ, որ հայ-քրդական հարաբերությունները վատթարացել են 1877–1878 թթ. ռուսական և օսմանյան կայսրությունների միջև տեղի ունեցած պատերազմից ու Հայկական հարցի միջազգայնացումից հետո, երբ հայերը անկախություն կամ ինքնավարություն ստանալու ձգտումներ ունեին:

Իրականում քուրդ հեղինակը շրջանցում և չի փորձում հասկանալ, որ հայերի սոցիալական ծանր դրության գլխավոր պատճառներից մեկը հենց քրդերի հարստահարություններն էին: Դարեր շարունակ հայերի կողոպուտը, նրանց ունեցվածքի, գույքի հափշտակությունը քրդերի համար կենսաձև ու ապրուստի միջոց է եղել: Իր ժողովրդի բարքերին քաջատեղյակ քուրդ պատմիչ Շարաֆ-Խանը թեպետ գովաբանում է քրդերի քաջությունը, բայց դժկամորեն խոստովանում է, որ նրանք ձեռք են բերել գողի ու ավազակի համբավ: Քուրդ պատմիչը գրում է, որ քրդերը գողության ու ավազակության գործում կվտանգեն իրենց

կյանքը, սակայն երբեք հանուն մի կտոր հացի ձեռքը մուրացկանության չեն պարզի[10]:

XV դ. Հայաստանի հարավային շրջաններում շրջած եվրոպացի բանագնաց Ջոզեֆա Բարբարոն, որն իր սեփական մաշկի վրա էր զգացել քրդերի կողոպտչական հմտությունները, զայրացած գրում է, որ նրանք ծայրահեղորեն անգութ են ու զբաղվում են բացահայտ գողությամբ՝ ավելացնելով, որ հսկում են ճանապարհները՝ անցորդներին կողոպտելու համար[11]: Միջնադարյան այս սրտառուչ հիշատակագրությունը տիպական է բոլոր դարերի համար. «Քրիստոսի անիծած քուրթն թալանեց զՎան եւ զՈստան չեմ գիտեր, թէ ինչ կենեմ»[12]:

Հ. Տահիրը պնդում է, թե հայերի նկատմամբ քուրդ սեփականատերերի հանցագործություններն ու գողությունները կատարվել են ռուս-թուրքական պատերազմից հետո (էջ 158):

Արդարացնելու համար քրդերի կողոպուտն ու հափշտակությունները հեղինակը գրքում կարմիր գծի պես առաջ է քաշում այն թեզը, թե հայերը ռուսական կամ եվրոպական պետությունների դրդմամբ ցանկանում էին անկախություն կամ ինքնավարություն ունենալ, ամեն ինչ անում էին քրդերին կոտորելու, այդ տարածքներից նրանց վտարելու համար:

Այո, ավելի քան բնական է, որ հայ քաղաքական միտքը, տեսնելով, որ հայ ժողովուրդը չունի անձի ու գույքի ապահովության տարրական իրավունք, փորձել է Օսմանյան կայսրության տիրապետությունից ազատագրվելու ուղիներ որոնել, սակայն ուժերի հարաբերակցությունը վերջիվերջո հանգեցրել է բարեփոխումների խնդրին, անձի ու գույքի ապահովությանը: Բացի այդ՝ հայ քաղաքական ուժերը, մոռանալով անկախության ու ինքնավարության մասին, ի վերջո, համագործակցեցին երիտթուրքական կոմիտեների հետ՝ հավատալով Օսմանյան կայսրության վերափոխությանը: Իսկ այդ ընթացքում առանց դադարելու շարունակվում էին քրդերի հալածանքները հայերի նկատմամբ, ինչն էլ ինքնին փաստում է քուրդ հեղինակի ասածների սնանկությունը:

Հ. Տահիրը, կարծես թե, շրջանցում է այն իրողությունը, որ հայ քաղաքական ուժերը քրդերի հետ համագործակցության ուղիներ էին որոնում:

Իրավացիորեն նկատելով, որ Աբդուլ Համիդն ամեն կերպ քաջալերում էր քրդերի բնակեցումը հայկական գյուղերում՝ դա համարելով հայկական ազատագրական շարժման դեմ պայքարելու միջոցներից մեկը (էջ 205), Հ. Տահիրը տարակուսելի մտքեր է արտահայտում համիդեական գնդերի ու 1894–1896 թթ.

---

[10] *Տե՛ս* Ш а р а ф - Х а н, с. 83.

[11] *Տե՛ս Հ. Հ а к о բ յ а н. Ուղեգրություններ, հ. Ա, էջ 183:*

[12] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Դ, յօրինեց Հ. Սահակ Վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1993, էջ 432:*

հայկական կոտորածների վերաբերյալ: Նա հարցադրում է կատարում՝ ինչու ստեղծվեցին համիդիե գնդերը՝ արդյո՞ք դրանք ստեղծվեցին հայերի ազատագրական շարժմանը հարվածելու նպատակով, արդյոք գնդերի ստեղծումը բխում էր քրդերի շահերից, հատկապես, որ նրանք ֆինանսական օգուտ ունեին դրանից... թե դրանց ձևավորումը խոչընդոտեց քրդական ազատագրական շարժմանը (էջ 216): Պատասխանենք քուրդ հեղինակի հարցադրմանը. համիդիե գնդերի նպատակը հենց հայ ազատագրական պայքարի ճնշումն էր, ինչքան էլ դժվար լինի խոստովանել նրա համար: Պատասխանելով նրա այն մտորումներին, թե այդ գնդերի ստեղծման շարժառիթը գուցե թե քրդերի ֆինանսական խնդիրներն էին, նկատենք, որ ոչ թե շարժառիթն էր, այլ քրդերին հրապուրելու ու հայերի դեմ հանելու միջոցը, որովհետև կանոնավոր գումար չստացող այդ գնդերն իրավունք ունեին ազատորեն թալանելու հայ բնակչությանը, և, ինչպես վերը նշեցինք, նրանց համար կողոպուտն ապրուստ հայթայթելու հիմնական միջոցներից էր:

Համիդյան կոտորածները կոչելով «Հայկական առաջին ճգնաժամի երկրորդ փուլը 1895–1896 թթ. (էջ 318)՝ Հ. Տահիրն ամեն գնով փորձում է կոծկել դրանում քրդերի մասնակցությունը: Այդ կոտորածների պատճառ է նա համարում հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը: Ըստ քուրդ հեղինակի՝ համիդյան կոտորածներին մասնակցել են միայն քոչվորական կյանք վարող քրդերը (էջ 339): Իսկ մասնակցության պատճառները եղել են ավելի քան առաքինի: Առաջին՝ «Քրդստանում տիրող տնտեսական ծանր դրությունը», թեպետ, ըստ նրա, միայն կողոպտել են և ոչ թե կոտորել (էջ 339): Երկրորդ՝ վրեժը, քանի որ «քոչվոր քրդերը շատ էին տուժել հայ հեղափոխական կոմիտեների գործունեությունից» (էջ 339–340):

Հ. Տահիրն իրավացի է այն հարցում, երբ պնդում է, որ համիդյան կոտորածները երբեմն նույնացվում են միայն քրդերի հետ, և տպավորություն է ստեղծվում, թե բոլոր կոտորածների մեղավորները քրդերն են: Այո, երբեմն համիդյան անունը նույնացվում է ոչ թե սուլթանի, այլ հենց համիդեական գնդերի հետ, այնինչ ջարդեր են տեղի ունեցել նաև այնպիսի վայրերում, օրինակ՝ Տրապիզոնում, որտեղ ոչ միայն համիդեական գնդեր, այլ ընդհանրապես քրդեր չկային:

Քուրդ հեղինակն իր ազգակիցներին հայերի կոտորածներից մաքուր դուրս հանելու համար ջանք չի խնայում: Նա մեղադրում է «դաշնակներին և հնչակներին» (էջ 318), որոնց գլխավորությամբ հայերն անդադար հարձակվում էին քրդերի վրա: Լավ, ենթադրենք հարձակվում էին, իսկ՝ ինչո՞ւ: Հեղինակն հնարավոր բոլոր միջոցներով խուսափում է ասել, որ հայերին անկաշկանդ ու ազատորեն կեղեքողը, հողը բռնագրավողը հենց քրդերն էին: Այդ իսկ պատճա-

ռով գլխիվայր շրջվում է իրականությունը, և խառնվում են պատճառն ու հետևանքը:

Սակայն այնքան շատ են համիդյան կոտորածներին քրդերի մասնակցության մասին տեղեկությունները, որ Հ. Տահիրը չէր կարող դրան չանդրադառնալ: Նա դժգոհություն է հայտնում, որ բրիտանացի հյուպատոսները քրդերի բռնությունների վերաբերյալ լուրերը աղավաղված էին հասցնում Եվրոպա՝ քրդերին ներկայացնելով վայրի ու սարսափելի ձևով (էջ 116): Իհարկե, հնարավոր է, ջարդերի ու կոտորածների անմիջական ազդեցությամբ որոշ դեպքերում փոքր-ինչ ուռճացված լինեն այդ տեղեկությունները, բայց պատմությունից անհնար է թաքցնել և պատմության դեմ մեղանչում կլինի հստակ չհայտարարել, որ քրդական ցեղերի մի զգալի մասը զբաղվում էր կողոպուտով ու ակտիվ մասնակցություն է ունեցել համիդյան կոտորածներին:

4. Ընդհանրապես Ցեղասպանության հարցը յուրօրինակ լակմուսի թուղթ է, և եթե որևէ պատմաբան դրա հերքմանն է հանգում, ուրեմն հաստատ է՝ նա պատմագետ չէ: Նախ, Հ. Տահիրը չի օգտագործում Ցեղասպանություն բառեզրը՝ կարծես ամեն կերպ խույս տալով ու փախչելով դրանից: Եթե Հայոց Մեծ եղեռնը նրա համար սոսկ «հայկական կոտորածներ» են (էջ 599), շատ դեպքում ինչոր անհասկանալի ու մշուշոտ կոտորածներ, ապա առանց վարանելու նա «ցեղասպանական գործողություններ» է (էջ 550) անվանում, այսպես ասած, հայերի բռնությունները քրդերի նկատմամբ: Հեղինակը հավասարության նշան է դնում հայերին ու քրդերին պատուհասած աղետի միջև. «Եթե հայկական ողբերգությունները հայտնի են աշխարհին, ապա քրդերի ողբերգությունները հատուկենտ պատմաբանների են հայտնի» (էջ 528):

Իհարկե, Առաջին համաշխարհային պատերազմը ծանր էր նաև քուրդ ժողովրդի համար, բայց միթե կարելի է բաղդատության մեջ դնել հայերին տեղահանելու, ոչնչացնելու ու իսլամացնելու պետական ծրագիրն այն զրկանքների հետ, որ բաժին է ընկել քրդերին: Հ. Տահիրի այս միտքը ընդհանուր գծերով համընկնում է թուրքական ժխտողականության նորահայտ թեզերին: Թուրքերն էլ պնդում են, որ իրենք էլ Առաջին աշխարհամարտում միլիոնավոր զոհեր են տվել, բայց դրանք զուտ պատերազմական գործողությունների ու պատերազմական իրապայմանների հետևանքներ են եղել: Որպեսզի արդարացնի քրդերի մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը, հեղինակն ինքն իրեն համոզում է, որ առաջինը հայերն են սկսել կոտորել քրդերին այն ժամանակ, երբ 1914 թ. - ռուսական զորքը մտել է Արևմտյան Հայաստան (էջ 529):

Բացի այդ, Հ. Տահիրը փորձում է հավասարության նշան դնել քրդերի՝ Հայոց ցեղասպանության մասնակցության և դրան ի պատասխան հայերի կողմից իրականացված վրիժառության գործողությունների միջև: Իհարկե, եղել են վրի-

ժառության դեպքեր, երբ ռուսական զորքերի հետ հայկական ուժերն էլ նահանջում էին Արևմտյան Հայաստանից, սակայն այդ երկուսը նույն հարթության մեջ դնելը, ինչպես Թաներ Աքչամը կասեր, գրեթե նույն է, ինչ մեղադրելով հրեաներին գերմանացիների դեմ Լեհաստանում ու Չեխոսլովակիայում իրականացրած վրեժխնդրական գործողությունների համար, հերքես Հոլոքոստը[13]:

Ինչպես վերն ասվեց, Հ. Տահիրի «մտորումները» համահունչ են թուրքական ժխտողականության թեզերին: Ինչպես հեղինակն է գրում, պատերազմի հենց սկզբից հայերը կատարել են բացահայտ դավաճանություն (էջ 591): Սակայն բավական է նշել օսմանյան բանակ զորակոչված հազարավոր հայերին, և հեղինակի խոսքն անհիմն է դառնում: Ի պատիվ իրեն՝ հեղինակը նաև գրում է. «Հայերին արտաքսեցին Հյուսիսային Քրդստանի վիլայեթներից դեպի սիրիական անապատներ, այդ տեղահանությունն ուղեկցվեց տղամարդկանց, կանանց, երեխաների կոտորածներով» (էջ 592):

Այդուհանդերձ, Հ. Տահիրը միտված է նվազեցնել քրդական մի շարք ցեղերի գործուն մասնակցությունը հայերի կոտորածներին. «Քրդերի դրական դերակատարությունն ավելի է, քան նրանց բացասական դերակատարությունը» (էջ 599): Ընդհանրապես քուրդ հեղինակների և առհասարակ քուրդ ժողովրդի շրջանում տարածված է այն կարծիքը, թե ցեղասպանության տարիներին քրդերն ավելի շատ են օգնության ձեռք մեկնել իրենց հարևան ու քիրվա հայերին, քան այլ ժողովուրդները, մասնավորապես՝ թուրքերը: Այս տեսակետը որոշ չափով կարելի է և ընդունել: Թեպետ հայտնի է, որ քրդերի մի զգալի մասը մտահոգ էր, որ կզրկվի իր «ածող հավից», որի ունեցվածքը պարբերաբար կորզում էր ու յուրացնում:

Չենք կարող համաձայնել նաև Հ. Տահիրի այն կարծիքին, թե կոտորածներին մասնակցած քրդերը հիմնականում եղել են բանտարկյալներ ու հանցագործներ (էջ 599–601): Հեղինակն ընդգծում է, որ այդպիսի հանցագործություններ սովորական մարդը չէր կարող իրականացնել (էջ 601): Մեզ համար հասկանալի է նրա տեսակետը. իսկապես դժվար է հավատալ, որ հասարակ մարդիկ մասնակցել են զարհուրելի սպանդի, կոտորել կանանց ու երեխաների: Բայց ասել, թե միայն քուրդ բանտարկյալներն ու հանցագործներն են մասնակցել հայերի ջարդերին, նշանակում է չհասկանալ տիրող իրավիճակը: Այդ տարիներին հակաքրիստոնեական ու հակահայկական մի այնպիսի ալիք էր առաջացել, որ մահմեդականների համար դրական էր գնահատվում քրիստոնյաների ոչնչա-

---

[13] *Թ. Աքչամ. Թուրքիան պետք է բացի սահմանները և ներողություն խնդրի Հայաստանից.–* http://www.ermenihaber.am/tr/news/2013/04/22/Taner-Ak%C3%A7am-T%C3%BCrkiye-s%C4%B1n%C4%B1rlar%C4%B1-a%C3%A7mal%C4%B1-ve-Ermenistan%E2%80%99dan-%C3%B6z%C3%BCr-dilemeli/ 17881*:*

ցումը: Նույնիսկ հայտնի են պատմություններ, որ քուրդը սպանել է վեց հոգու և յոթ թիվը ամբողջացնելու համար փորձել է սպանել ևս մեկին, քանի որ տարածված էր այն մտայնությունը, թե միայն յոթ հայ սպանելու դեպքում ինքը կհայտնվի դրախտում[14]:

Աներկբա է՝ քրդական մի շարք ցեղեր մասնակցել են հայերի կոտորածների իրագործմանը: Եթե միայն բանտարկյալներն ու հանցագործներն են մասնակցել, ինչպես պնդում է Հ. Տահիրը, ապա ինչո՞ւ են շատ քրդեր շարունակում ներողություն խնդրել հայերից: Ավելին, հայերի կոտորածին քրդերի ներգրավածությունը կարծես խարան լինի քուրդ ժողովրդի ճակատին, և դրանից ազատվելու նպատակով հասարակ քուրդ գյուղացիներն իրենց ցավն ու ափսոսանքն են հայտնում, ներողություն խնդրում հայերից: Եթե հեղինակը ծանոթ չէ, ապա խորհուրդ կտանք կարդալ Գյուլչիչեք Գյունել Թեքինի «Քրդերը պատմում են Հայոց ցեղասպանության մասին»[15] *և Ադնան Չելիքի ու Նամըք Քեմալ Դինչի «Հարյուրամյա ցավ. 1915, Դիարբեքիր»*[16] *աշխատությունները, որտեղ մեկտեղված են քրդերի բանավոր պատմությունները, հուշերն ու վկայությունները Հայոց ցեղասպանությանը քրդերի մասնակցության մասին:*

Ուզում ենք հավատալ, որ նման աշխատություն գրելու շարժառիթը Հ. Տահիրի ներքին մղումն է, և չկա անտես ձեռք: Սակայն պատմությունը ծուռ հայելու մեջ ու միակողմանի ներկայացնելն ամենևին էլ հայ և քուրդ ժողովուրդների հարաբերությունների օգտին չի ծառայում:

Ներկա պայմաններում, երբ քրդերը ջանում են սեփական պատմությանն առերեսվել, հայ-քրդական հարաբերություններին նոր լիցք հաղորդել ու դրա հետևանքով նահանջում է Ցեղասպանությունից հետո հայկական հիշողության մեջ սեպված քրդի բացասական կերպարը, այսօրինակ աշխատությունների ստեղծումը կարող է միայն վնասել երկու ժողովուրդների դրական ձգտումներին:

ԳՈՌ ԵՐԱՆՅԱՆ

---

[14] *Այդ մասին տե՛ս Սպանե՛ք յոթ հայի և դրախտ կընկնեք. քրդերի վկայությունները Ցեղասպանության մասին.*– http://www.civilnet.am/news/ 2015/02/12/turkey-diyerbakir-kurds-armenian-genocide-2015/261333:

[15] Gülçicek Günel Tekin, Beni Yıkamadan Gömün. Kürtler Ermeni Soykırımını Anlatıyor, Istanbul, 2013.

[16] Adnan Çelik, Namık Kemal Dinç. Yüzyıllık ah, Toplumsal hafızanın izinde 1915 Diyarbekir, Istanbul, 2015.